

ՅՆՈՐՔՆԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ

(Օ. ԵՐԷՅՆԵՐ)

Նուիրում եմ այս հէքիաթները փոքրիկ աղջկան,
որ շնորհիւ Աստուծոյ կը զարգանայ, մինչև որ ա-
ւելի կատարեալ կերպով կը հասկանայ ալն, ինչ որ
առաջմէ մեզ համար դեռ շօշափելի չէ ու երևում
է մեզ ցնորքների ու թեթեանցուկ տեսիլների մէջ:

Օ. ԵՐԷՅՆԵՐ

Matjesfontein
Cape Colony South Africa
November 1890.

Վ Ա Յ Ր Ե Ն Ի Մ Ե Ղ Ո Ւ Ն Ե Ր

Բայց պատուհանի առաջ նստած էր մայրը՝ Ներքև ակա-
ցիանների տակ խաղացող երեխանների ձայները հասնում էին
նրան, իսկ ջերմ կէսօրուայ օդը աւելի և աւելի թափանցում
էր սենեակը: Վայրենի մեղունները, ծաղկափռուց դեղնուած
թաթիկներով, մերթ սենեակն էին թռչում, մերթ սենեակից
դուրս էին սլանում, նստում էին ակացիանների տերևների
վրայ ու անդադար բզզում:

Մայրը նստած էր ցածր բաղկաթոռի վրայ սեղանի առաջ
և ինչ որ կարկատում էր՝ իր առաջ դրուած զամբիւղից նա
հանեց ձեռագործը, որի մի մասը ընկաւ ծնկների վրայ և կի-
սով չափ ծածկեց նրա առջև դրած գիրքը: Նա կարում էր ու
հետևում իր ասեղի պտոյտներին: Վերջապէս մեղունների միա-
տեսակ բզզոցը և երեխանների ձայների աղմուկը ձուլուեցին
նրա ականջներում իբրև մի անորոշ շշնջիւն, իսկ ասեղը աւելի

դանդաղ ու դանդաղ շարժումներ սկսեց գործել, Եւ մեղունե-
րը, այն երկայնոտանի պիծականման արու մեղուները, որոնք
մեղր չեն պատրաստում, բարձր բզզոցով աւելի և աւելի էին
մօտենում նրա գլխին:

Քնից ծանրացած նա դրեց ձեռքը սեղանի ծայրին, գուլ-
պայի հետ, իսկ գլուխը դրեց ձեռքին: Երեխաների ձայնները
բակից նրան թւում էին մերթ մօտիկ, մերթ հեռացած և աւե-
լի ու աւելի միանում էին նրա ականջներում: Կապ բոլորո-
վին էլ չէին հասնում մօր ականջին: Եւ նա սկսեց միայն զգալ
արգանդում պտուկած իր իններորդ երեխային:

Մեղունները շարունակում էին թռչել նրա գլխի շուրջը, և
նա, թեքուելով առաջ, քնած էր, իսկ նրա գլխով անցնում էր
կախարդական մի երազ:

Նա երազում էր թէ մեղունները շարունակ երկայնանում
էին ու երկայնանում, մինչև որ վերջապէս մարդկային արա-
րած դառնալով բոլոր ժամանակ պտտում էին նրա շուրջը:
Նրանցից մէկը մօտեցաւ մօրը և ասաց՝ «Թոյլ տուր ձեռքս
դնել այնտեղ, որտեղ պտուկած է երեխադ. եթէ ես ձեռքովս դիպ-
չեմ նրան, նա կը լինի այնպիսի մէկը՝ որպիսին ես եմ»:

Մայրը հարցրեց՝ «Դու ո՞վ ես»:

«Ես—Առողջութիւնն եմ»—պատասխանեց նա.—«Ում որ
ես մօտենում եմ, նրա երակներում հոսում է զուարթ կարմիր
արիւն, նա ոչ յոգնածութիւն, ոչ էլ ցաւ գիտէ, նրա համար
կեանքը ամբողջովին զուարճութիւն է առանց տխրութեան,
զուարթ ու յարատւ մի խնդանք է»:

—«Ո՛չ, ասաց միւսը,—թոյլ տուր ինձ ձեռքս դիպչնեմ
երեխայիդ, ես—Հարստութիւնն եմ: Եթէ ես դիպչեմ նրան, նա
ազատուած կըլինի բոլոր նիւթական հոգսերից. նա կ'ապրի իր
եղբայրների ոյժերով և արիւնով, եթէ կամենայ. և բոլորը,
ինչ որ նրա աչքերին հաճելի կըլինի, նա ձեռք կը բերի: Նա չի
գիտենայ, թէ ինչ բան է կարօտութիւն ունենալ: Եւ նա լռեց,
իսկ երեխան նոյնպէս հանգիստ ու առանց շարժումի պտուկած
էր»:

Եւ երրորդ արարածը ասաց. «Ի՛նձ թոյլ տուր դիպչել ե-
րեխայիդ, ես—Փառք եմ: Ես տանում եմ մարդուն բարձր
բլուրը, որտեղից բոլոր մարդիկ կարող են նրան տեսնել.
Երբոր նա մեռնում է, նրան չեն մոռանում, նրա անունը թըն-
դում է դարեր, նա անցնում է բերանից բերան, մի սերունդից
միւս սերունդը: Մտածիր միայն.—չըմոռացուե՛լ դարերի ըն-
թացքում»:

Մայրը չարունակում էր հանդիստ և ուղիղ շունչ քաշել քնի մէջ, բայց ֆանտաստիկական տեսիլները չըջապատում էին նրան ամեն կողմից:

—«Թոյլ տուր ինձ դիպչել երեխայիդ—ասաց էլի մինը նրանցից.—Ես Սէրն եմ, եթէ ես դիպչեմ երեխայիդ—նա միայնակ չէ անցնելու իր կեանքի ճանապարհով, անթափանցելի մթութեան օրերով, երբ նա ձեռք կըմեկնի օգնութեան, նա կըհանդիպի միւս ձեռքին, որ կըպահպանի և կըխրախուսի նրան. և եթէ բոլորն էլ նրա դէմ լինեն, կըդառնուի մի հոգի, որ կ'ասի նրան՝ «Ես քեզ հետ եմ»:

Եւ երեխան ցնցուեց մօր արդանդում:

Բայց երեւոյ էլի մի արարած որ ասաց. «Ինձ թոյլ տուր մօտենալ, որովհետեւ, ես—Տաղանդն եմ: Ես ընդունակ եմ գործելու այն բոլորը, ինչ որ չինուած է արդէն: Ես վարձատրում եմ յաջողութիւն ունեցող զինուորին և պետական գործիչին, փիլիսոփային և քաղաքագէտին և գրողին, երբէք իւր ժամանակից առաջ չընթացող և երբէք յետ չմնացող, երեխադ երբէք չի գանգատուիլ իր անյաջողութիւնից, եթէ ես դիպչելու լինեմ»:

Մեղուները թռչում էին մօր գլխի վրայով, համարեա, թէ դիպչում էին մօրը իրանց երկայն բարակ թաթիկներով, երբ երազում սենեակի հեռաւոր մութ անկիւնից դուրս եկաւ մի նոր ուրուական գունատ դէմքով, խոր կնճիռներով, ներս ընկած թշերով, ժպիտը դողում էր նրա չըթունքներին: Նա մեկնեց ձեռքը մօրը, մայրը յետ տատանուեց և ձիչ արձակելով հարցրեց. «Դու—ո՞վ ես» նա ոչինչ պատասխան չը տուեց:

Մայրը նայեց նրա աչքերին և ասաց. «Ի՞նչ կարող ես դու տալ զաւակիս.—առողջութիւն»:

Նա ասաց. «Ոչ, այն մարդու երակներում, որին ես դիպչում եմ, վառվում է ահռելի ջերմ և որպէս հուր լափում է նրա արիւնը, այդ ջերմը կարող է միայն այն ժամանակ բժշկուել, երբ կեանքը բժշկուած կը լինի»:

—«Դու տալիս ես հարստութիւն»:

Նա գլուխը բացասական կերպով շարժեց. «Երբ որ մարդը, որին ես դիպչելու եմ, կը թեքուի գետնից ոսկի բարձրացնելու համար, յանկարծ մի կրակ երկնքում կը քաշի նրան և մինչև որ նա իւր դէմքը դէպի երկինքն է դարձնում, ոսկին դուրս է սլքւում նրա ձեռքերից և մի ուրիշ անցորդ է երեւում բռնում»:

—«Փառք ես տալիս»:

—«Ո՛չ, որին ես դիպչելու եմ, նրա համար աւագի

վրայ մի անտեսանելի մատով նկարագրուած է շաւիղ, երբեմն այդ շաւիղը տանում է համարեա մինչև գազաթը և յետոյ յանկարծ ուրուում է ներքև՝ դէպի ձորը. նա պէտք է գնայ այդ շաւղով, թէպէտ ոչ ոք իրանից աւելի չէ տեսնում այդ շաւիղը»:

—«Սէր ևս տալիս»:

Ուրուականը ասաց՝ «Նա կը զգայ սիրոյ մեծ ծարաւ, բայց յագեցում չէ գտնելու, և երբ նա բաց կանի իր գերկը սիրոյ առաջ և կը կամենայ սեղմել նրան... Այդ ժամանակ հեռու հորիզոնի վրայ նա կը տեսնի լուսոյ ճառագայթ. նա կը գնայ դէպի այդ ճառագայթը, բայց իր գանձը իր հետ նա չի կարողանայ տանել. նա պէտք է մենակ ճանապարհ ընկնի. կամ թանկագին էակը իր բոցավառ սրտին սեղ- մելիս, երբ նա կը բացականչի՝ «Ժմա ես, իմ սեպհականս», նա կը լսի մի ձայն՝ «Մերժիր նրան, դա քոնը չէ»:

—«Նա յաջողութիւն կ'ունենայ»:

Ուրուականը ասաց՝ «Անյաջողութիւն կը տեսնի Ուրիշ- ների հետ մի որ և է նպատակի ձգտելիս, նրանք այդ նպատակին նրանից աւելի շուտ կը հասնեն. որովհետև արտասովոր ձայներ կը կանչեն նրան և պանչելի լոյս կը հրապուրի նրան. նա ստիպուած կը լինի լսել ու սպասել. Բայց ամենազարմանալին անա թէ որն է. հեռու, հեռու այրող աւաղների հետեից, այնտեղ, ուր միւս մարդիկ անապատային տարածութիւններից աւելի ոչինչ չեն տեսնում, նա կը տեսնի մի կապոյտ ծով: Այդ ծովի վրայով արեւը միշտ փայլում է, նրա ջրերը կապոյտ են, որպէս պարզ երկինք, իսկ ափերի վրայ խաղում է սպիտակ փրփուր: Այդ ծովի միջից մի մեծ աշխարհ է բարձրանում, և նրա սարերի գազաթներէն որդիդ կը տեսնի շողշողուն ոսկի»:

—Եւ մայրը հարցրեց՝ «Իսկ որդիս կը համնի այդ աշխարհը»:

Ուրուականը օտարոտի ժպտաց:

Մայրը հարցրեց՝ «Կայ արդեօք իրականութեան մէջ այդ աշխարհը»:

Նա ասաց՝ «Ի՞նչ կայ իրականութեան մէջ»:

Եւ մայրը նայեց ուրուականի կիսաբաց աչքերին և ասաց «Դպիր երեխայիս»:
—Ուրուականը խոնարհուեց, դրեց ձեռքը քը- նած մօր վրայ և կամաց ինչ որ փախաց: Մայրը կարողացաւ լսել միմիայն այս խօսքեր՝ «Հասուցում կը լինի քեզ այն, որ իդեալը (կատարելութեան գաղափարը) — իրականութիւն կը դառնայ քեզ համար... Եւ երեխան արգանդում ցնցուեց: Մայրը

չարունակ քնած էր նոյնպէս ծանր քնով, իսկ տեսիլները ան-
յայտացան:

Եւ նրա էութեան խորքերի մէջ դեռ չը ծնուած երեխան
տեսաւ մի երազ, նրա դեռ երբէք օրուայ լոյս չը տեսած աչ-
քերում ու դեռ չը հասունացած ուղեղի մէջ փայլեց լոյսի
զգացմունք, այն լոյսի, որ նա երբէք տեսած չէր և, գուցէ,
երբէք տեսնելու էլ չէր, բայց որ կայ մի որ և է տեղ:

Եւ երեխան ստացաւ իր նուէրը՝ զաղափարականը—ի-
դէպը նրա համար իրականութիւն դարձաւ:

Թարգմ. ոս. Յ. Տ.-Դ.